Հայտարարվում է՝ «ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մ.Ղազարյանի անվան N2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ ։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀօրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ

- հրատարակված հոդվածներից ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերից ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 10(տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ 2022 թվականի փետրվարի 9-ից մինչև փետրվարի 22-ը ներառյալ, ամենօր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. Փետրվարի 25-ին՝ ժամը 14:00-ին, ՝ «ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մ.Ղազարյանի անվան N2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ում: Հասցեն՝ Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, 1-ին փողոց 14 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 093 056515 և 094 544645 հեռախոսահամարներով